Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թվականի
սեպտեմբերի 7-ի N 1151 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԼՈՂԱԿԱՆ ՍԱՐՔ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՍԱՅԼԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՈՐՈՇԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով լողական սարք ու հաշմանդամի սայլակ ձեռք բերելու համար պետական հավաստագրեր (այսուհետ՝ հավաստագիր) տրամադրելու, դրանց գնային արժեքը որոշելու և հավաստագիրը կիրառելու հետ կապված հարաբերությունները:

2. Հավաստագրի հիման վրա հաշմանդամի սայլակը և լողական սարքը տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. Հավաստագիրը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում:

4. Հավաստագրի տրամադրման գործընթացն իրականացնում է «Հանգրվան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Հանգրվան» ՊՈԱԿ):

5. Յուրաքանչյուր պարագայի (հաշմանդամի սայլակի և լողական սարքի) համար տրամադրվում է մեկ հավաստագիր:

6. Հավաստագրի հիման վրա հաշմանդամի սայլակ և լողական սարք տրամադրվում են որակավորման ընթացակարգի արդյունքում ընտրված և նախարարության

հետ պայմանագիր կնքած իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից: Կազմակերպությունների ընտրության համար սահմանվում են հետևյալ որակավորման չափանիշները՝

1) որակավորման ընթացակարգին մասնակցելու համար դիմում ներկայացնելու օրվան նախորդող մեկ տարվա մասնագիտական փորձառություն: Սույն կարգի իմաստով մասնագիտական փորձառություն է համարվում բժշկական սարքերի, սարքավորումների կամ պրոթեզաօրթոպեդիկ կամ վերականգնողական պարագաների կամ վերականգնման տեխնիկական միջոցների ձեռքբերման և տրամադրման կամ դեղատնային գործունեությամբ զբաղվելու փորձառություն.

2) պայմանագրով ստանձնած պարտավորություններն առանց կանխավճարի կատարելու հնարավորություն.

3) աշխատանքային ռեսուրսներ (շահառուներին սպասարկելու և ծառայություն ստացած անձանց վերաբերյալ տվյալները Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ մուտքագրելու համար համապատասխան մասնագետներ, լսողական սարք տրամադրող կազմակերպություններ՝ նաև համապատասխան մասնագետ՝ շահառուի կարիքին համարժեք լսողական սարք տրամադրելու և հարմարեցնելու համար.

4) պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ (համակարգչային տեխնիկա), ինչպես նաև մատչելի շենքային պայմաններ՝ տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց սպասարկումն իրականացնելու համար, ներառյալ անարգել մուտք կազմակերպության շենք և սպասարկման սրահ՝ մուտքի զրոյական մակարդակ կամ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական նորմերին համապատասխան կառուցված թեքահարթակ, իսկ դրանց անհնարինության դեպքում համապատասխան անվտանգ տեխնիկական սարքավորումներ՝

վերելակ, բարձրացնող մեխանիզմներ և սպասարկման սրահում տեղաշարժվելու համար խոչընդոտների բացակայություն:

7. Կազմակերպությունը սույն կարգի 6-րդ կետով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստիացնում է իր կողմից տրված՝ միակողմանի հաստատված հայտարարությամբ:

8. Նախարարությունում ստեղծվում է մշտապես գործող որակավորման հանձնաժողով՝ կազմակերպությունների ընտրության և պայմանագրերի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով: Որակավորման հանձնաժողովը հաստատում է որակավորման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը, ուսումնասիրում կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին և տալիս է գրավոր եզրակացություն պայմանագիր կնքելու մասին:

9. Կազմակերպությունները սույն կարգի 6-րդ կետով սահմանված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը ներկայացնում են նախարարություն: Ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չլինելու դեպքում նախարարությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպության հետ կնքում է պայմանագիր, որը պետք է պարունակի սույն կարգի 12-րդ և 13-րդ կետերով նախատեսված դրույթները: Ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում նախարարությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է կազմակերպությանը: Վերջինս երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է շտկված փաստաթղթերը: Նախարարության և կազմակերպության միջև պայմանգիր կնքվում է շտկված փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկված փաստաթղթերը նախարարություն չներկայացվելու դեպքում կազմակերպությունը պայմանագիր կնքելու համար կրկին կարող է դիմել երկու ամիս հետո:

10. Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո տվյալ կազմակերպությունը գրանցվում է որակավորված կազմակերպությունների ցանկում: Կազմակերպությունների ցանկը հրապարակվում է նախարարության պաշտոնական էլեկտրոնային կայքէջի գլխավոր էջում: Կազմակերպությունների ցանկը կարող է փոփոխվել կնքված պայմանագրերը խզելու կամ նոր կազմակերպություններ ցանկում ընդգրկելու դեպքում: Կազմակերպությունը կարող է ցանկացած ժամանակ դիմել և որակավորվելու դեպքում ներառվել կազմակեր-պությունների ցանկում՝ բացառությամբ սույն կարգի 9-րդ կետով նախատեսված դեպքի: Ցանկում ներառված կազմակերպությունը ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ ցանկից՝ իր դիմումի համաձայն կամ պայմանագիրը լուծվելու դեպքում:

11. Հավաստագիրը որոշակի վավերապայմաններով և ձևով փաստաթուղթ է, որը կազմակերպության կողմից մատուցված ծառայության դիմաց պետության կողմից ֆինանսական փոխհատուցման հիմք է:

12. Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը, տրա-մադրված սայլակների և լսողական սարքերի դիմաց վճարում կատարելու նպատակով, կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացնում հաշվետվություն, որում ներառված են տվյալներ տրամադրված պարագայի անվանման, քանակի, գնի, ժամկետների, դրանք ստացած անձանց անձնական տվյալների վերաբերյալ, կազմակերպության և հաշմանդամի միջև կնքված հանձնման-ընդունման արձանագրությունը, հավաստագրի հիման վրա տրամադրված սայլակի և լսողական սարքի տեխնիկական բնութագրի պատճենը, հաշիվ ապրանքագիրը:

13. Հավաստագրի հիման վրա տրամադրված հաշմանդամի սայլակի և լսողական սարքի դիմաց վճարումն իրականացվում է սույն կարգի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում՝ յուրաքանչյուր տարվա Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեով և տարեկան հատկացումների կատարման եռամսյակային համամասնություններով նախատեսված միջոցների շրջանակներում:

II. ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

14. Շահառուն կամ նրա օրինական ներկայացուցիչը (ծնող, որդեգրող, խնամակալ կամ հոգաբարձու (այսուհետ՝ դիմող) հաշմանդամի սայլակ և լսողական սարք ձեռք բերելու նպատակով հավաստագիր ստանալու համար առձեռն կամ փոստային կապի միջոցով կամ առցանց (էլեկտրոնային) եղանակով դիմում է նախարարություն կամ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին (այսուհետ՝ ՄԾՏՄ) կամ «Հանգրվան» ՊՈԱԿ՝ ներկայացնելով նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշման N 1 հավելվածի 36-րդ և 37-րդ կետերով սահմանված փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր): Փոստային կապի միջոցով դիմումը ներկայացնելու դեպքում փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց պատճենները:

15. Փաստաթղթերն ստանալուց հետո ՄԾՏՄ-ն ստուգում է դրանց լիարժեքությունը և երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում նախարարություն՝ դրա մասին միաժամանակ գրավոր տեղեկացնելով դիմողին: Նախարարությունն ստուգում է դրանց լիարժեքությունը և երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում «Հանգրվան» ՊՈԱԿ: «Հանգրվան» ՊՈԱԿ-ը հավաստագիրը տրամադրում է դիմողին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ փոստային առաքումով, իսկ քաղաքացու ներկայանալու դեպքում՝ առձեռն:

16. Ներկայացված փաստաթղթերում անճշտություններ կամ անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում նախարարությունը կամ «Հանգրվան» ՊՈԱԿ-ը երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է դիմողին:

17. Ճշտված և (կամ) լրացված փաստաթղթերն ստանալուց հետո հավաստագիրը տրամադրվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

18. Փաստաթղթերի կրկնօրինակները պահվում են «Հանգրվան» ՊՈԱԿ-ում:

19. Հավաստագրի հետ միասին դիմողին տրամադրվում է նաև կազմակերպությունների ցանկը, հասցեները, կոնտակտային տվյալները: Քաղաքացին կարող է դիմել ցանկացած կազմակերպություն՝ ծառայություն ստանալու համար:

III. ՀԱՎԱՍՏԱԳԻՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

20. Հավաստագիրը լրացվում է «Հանգրվան» ՊՈԱԿ-ի կողմից:

21. Հավաստագիրը կազմված է երկու մասից՝ հիմնական մաս, որը տրամադրվում է դիմողին, և կտրոն, որը մնում է «Հանգրվան» ՊՈԱԿ-ում:

22. Հավաստագիրը համարակալվում և հաշվառվում է:

23. Հավաստագիրը տրամադրելիս՝ համապատասխան գրանցում է կատարվում հավաստագրի հաշվառման գրանցամատյանում, որի դիմաց դիմողն ստորագրում է, իսկ փոստային առաքման դեպքում՝ հավաստագիր տրամադրողը նշում է կատարում փոստային առաքումը հավաստող տվյալների մասին:

24. Վնասված, սխալ կամ ջնջումներով լրացված հավաստագիրը համարվում է անվավեր և պահվում «Հանգրվան» ՊՈԱԿ-ում:

IV. ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԳՆԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

25. Հավաստագրի գնային արժեքը սահմանվում է յուրաքանչյուր տարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հաշմանդամի սայլակի և լսողական սարքի ձեռքբերման համար նախատեսված միջոցների շրջանակներում:

26. Կազմակերպությունից շահառուն ստանում է իրեն տրամադրված հավաստագրի գնին համարժեք հաշմանդամի սայլակ կամ լսողական սարք:

27. Եթե շահառուի նախընտրած հաշմանդամի սայլակի կամ լսողական սարքի գինը բարձր է հավաստագրի համար սահմանված գնային արժեքից, ապա շահառուն իր ցանկությամբ կարող է ձեռք բերել նշված հաշմանդամի սայլակը կամ լսողական սարքը՝ վճարելով արժեքի տարբերությունը:

28. Եթե անձն արդեն ունի սայլակ, կարող է հավաստագրի գնային արժեքի սահմաններում ձեռք բերել այլ պահեստամասեր կամ հարակից այլ պարագաներ (մարտկոցներ, անիվներ, կառավարման վահանակներ և այլն), որոնք օգտագործվում են սայլակի ֆունկցիոնալությունը, երկարակեցությունը կամ հարմարավետությունն ապահովելու համար:

29. Եթե անձը նախընտրում է ձեռք բերել ավելի էժան սայլակ կամ լսողական սարք, քան հավաստագրի գնային արժեքն է, ապա կարող է հավաստագրի ավելացած գնային արժեքի սահմաններում նույն կազմակերպությունից ձեռք բերել այլ պահեստամասեր կամ հարակից պարագաներ (լրացուցիչ անիվներ, ոտնակներ, հակախոցային բարձիկներ, մարտկոցներ և այլն), որոնք օգտագործվում են պարագայի ֆունկցիոնալությունը, երկարակեցությունը կամ հարմարավետությունն ապահովելու համար:

30. Եթե հավաստագրի շրջանակներում ձեռք բերված սայլակի կամ լսողական սարքի գինը ավելի ցածր է հավաստագրով սահմանված գնային արժեքից, ապա տրամադրված հաշմանդամի սայլակի կամ լսողական սարքի համար կազմակերպությունը ֆինանսավորվում է փաստացի գնային արժեքի չափով:

31. Հաշմանդամի սայլակ ստանալու համար ձեռք բերված, սակայն ուժի մեջ գտնվելու ժամկետում չօգտագործված հավաստագրի արժեքն ավելանում է ձեռք բերված հավաստագրի արժեքի 25 տոկոսի չափով՝ յուրաքանչյուր հաջորդող տարիների համար (հաջորդող տարիները հաշվարկվում են հավաստագիրն ուժի մեջ գտնվելու ժամկետը

լրանալու օրվանից սկսած)։ Ավելացած արժեքով հավաստագիր ձեռք բերելու համար անձը դիմում է նախարարություն կամ ՍԾՏՄ կամ «Հանգրվան» ՊՈԱԿ՝ ներկայացնելով նաև չօգտագործված հավաստագիրը։ Չօգտագործված հավաստագրերի պահպանումը և արխիվացումը կատարվում է «Հանգրվան» ՊՈԱԿ–ի կողմից։

32. Սույն կարգի համաձայն հերթական նոր սայլակն ստանալու դեպքում շահառուն կամ նրա օրինական ներկայացուցիչը, իսկ անձի մահվան դեպքում՝ ընտանիքի անդամները նախորդ ստացած սայլակը կարող են վերադարձնել «Հանգրվան» ՊՈԱԿ։ Վերադարձված հաշմանդամի սայլակներն օգտագործվում են դրա կարիքն ունեցող այլ անձանց ժամանակավոր տրամադրելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151 -Ն որոշման N 3 հավելվածով սահմանված՝ քաղաքացիների կողմից վերադարձված հաշմանդամի սայլակը ժամանակավոր տրամադրելու կարգի համաձայն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
սեպտեմբերի 7-ի N 1151 - Ն որոշման

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Վ Ա Ս Տ Ա Գ Ի Ր
ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՍԱՅԼԱԿԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

Ձև N 1

Կտրոն

Հավաստագրի համարը _____

1. Շահառուի անունը, ազգանունը, հայրանունը

_____

2. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը

_____

3. Անձնագրի (ծննդյան վկայականի) տվյալները

_____

(անվանումը, սերիան, համարը, ե՞րբ և ում կողմից է տրվել)

4. Հավաստագրի արժեքը _____

5. Տրամադրման ամսաթիվը _____

6. Շահառուի կարգավիճակը

_____

7. Դիմողի անունը, ազգանունը, հայրանունը

_____

8.Հավաստագիրը տրամադրողի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____

Սույն հավաստագիրն ուժի մեջ է մինչև՝

_____ _____ 20_____թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՍԱՅԼԱԿԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ N _____

1. Շահառուի անունը, ազգանունը, հայրանունը _____

2. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը_____

3. Անձնագրի (ծննդյան վկայականի) տվյալները

_____

(անվանումը, սերիան, համարը, ե՞րբ և ում կողմից է տրվել)

4. Հավաստագրի արժեքը _____

5. Տրամադրման ամսաթիվը _____ 20_____թ.

6. Շահառուի կարգավիճակը_____

7. Հավաստագիրը տրամադրողի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____

_____

Սույն հավաստագիրն ուժի մեջ է մինչև՝

_____ _____ 20_____թ.

Սույն հավաստագիրը շահառուին տրամադրվում է ԱՆՎՃԱՐ:

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Վ Ա Ս Տ Ա Գ Ի Ր
ԼՍՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

Ձև N 2

Կտրոն

1. Հավաստագրի համարը _____

2. Շահառուի անունը, ազգանունը, հայրանունը
_____

3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը
_____

4. Անձնագրի (ծննդյան վկայականի) տվյալները
_____

5. Դիմողի անունը, ազգանունը, հայրանունը
_____

6. Շահառուի կարգավիճակը
_____

7. Հավաստագրի քանակը _____

8. Հավաստագրի արժեքը _____

9. Տրամադրման ամսաթիվը_____

10. Հավաստագիրը տրամադրողի անունը, ազգանունը, ստորագրությունը
_____

_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼՍՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ N _____

1. Շահառուի անունը, ազգանունը, հայրանունը_____

2. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը_____

3. Անձնագրի (ծննդյան վկայականի) տվյալները _____

_____
(անվանումը, սերիան, համարը, ե՞րբ և ում կողմից է տրվել)

4. Հավաստագրի քանակը _____ Հավաստագրի արժեքը_____

5. Ու՞մ կողմից է տրվել հավաստագիրը_____

6. Հավաստագիրը տալու ամսաթիվը _____ 20_____թ

7. Շահառուի կարգավիճակը_____

8. Հավաստագիրը տրամադրողի անունը, ազգանունը, ստորագրությունը
_____

Սույն հավաստագիրը շահառուին տրամադրվում է անվճար:

Սույն հավաստագիրն ուժի մեջ է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2017 թվականի
սեպտեմբերի 7-ի N 1151 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՍԱՅԼԱԿԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է քաղաքացիների կողմից վերադարձված հաշմանդամի սայլակը ժամանակավոր օգտագործման համար տրամադրելու ընթացակարգը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետով նախատեսված դեպքերում քաղաքացին, իր ցանկությամբ, կարող է նախորդ ստացած սայլակը վերադարձնել «Հանգրվան» ՊՈԱԿ:

3. Վերադարձված սայլակի վերաբերյալ տվյալները «Հանգրվան» ՊՈԱԿ-ը գրանցում է քաղաքացիների կողմից վերադարձված հաշմանդամի սայլակի հաշվառման գրանցամատյանում՝ համաձայն սույն կարգի N 3 ձևի:

4. Ժամանակավոր օգտագործման համար սայլակ տրամադրվում է անձի բնակության վայրի առաջնային բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնող կամ մասնագիտացված բժշկական կազմակերպության (հաստատության) կողմից տրված մասնագիտական եզրակացության (այսուհետ՝ մասնագիտական եզրակացություն) հիման վրա:

5. Ժամանակավոր օգտագործման համար սայլակները տրամադրվում են առավելագույնը 6 ամիս ժամկետով, ընդ որում, ժամկետը նշվում է սույն կարգի 4-րդ կետով սահմանված կազմակերպությունների կողմից տրված մասնագիտական եզրակացության մեջ: Եթե քաղաքացուն սայլակն անհրաժեշտ է ավելի երկար ժամկետով, ապա նա «Հանգրվան» ՊՈԱԿ է ներկայացնում նոր մասնագիտական եզրակացություն:

6. Ժամանակավոր օգտագործման համար տրամադրված սայլակի վերաբերյալ տվյալները «Հանգրվան» ՊՈԱԿ-ը գրանցում է ժամանակավոր օգտագործման համար

տրամադրված սայլակների հաշվառման գրանցամատյանում՝ համաձայն սույն կարգի N 4 ձևի:

7. Գրանցամատյաններում անճշտությունների, սխալ գրառումների ուղղումը կատարվում է «Հանգրվան» ՊՈԱԿ-ի կողմից՝ սխալ կամ ոչ ճիշտ լրացված գրառումները վերցնելով փակագծերի մեջ՝ հաջորդ ազատ նոր տողում ավելացնելով ճիշտ գրառումները: Կատարված ոչ ճիշտ գրառման կողքին դրվում է ուղղումը կատարողի ստորագրությունը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և պաշտոնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ձև N 3

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՍԱՅԼԱԿԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

NN ը/կ	Սայլակը վերադարձնողի անունը, ազգանունը, հայրանունը	Սայլակը վերադարձնելու օրը, ամիսը, տարեթիվը	Վերադարձված սայլակների քանակը	Սայլակը վերադարձնողի ստորագրությունը	Սայլակն ստացողի անունը, ազգանունը, հայրանունը	Սայլակն ստացողի ստորագրությունը	Նշումներ
	1	2	3	4	5	6	7
1.							
2.							
3.							
4.							
…							

Ձև N 4

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՍԱՅԼԱԿՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

NN ը/կ	Սայլակի կարիք ունեցող անձի անունը, ազգանունը, հայրանունը	Սայլակի կարիք ունեցող անձի սոցիալական կարգավիճակը	Սայլակը տրամա-դրելու օրը, ամիսը, տարեթիվը	Մասնագիտական եզրակացություն տրամադրողի անունը, ազգանունը, հայրանունը	Որքան ժամկետով է տրամա-դրվում սայլակը	Սայլակն ստացողի անունը, ազգանունը, հայրանունը	Սայլակն ստացողի ստորա-գրությունը	Սայլակը տրամադրողի անունը, ազգանունը, հայրանունը	Սայլակը տրամա-դրողի ստորա-գրությունը
	1	2	3	4	5	6	7	8	9
1.									
2.									
3.									
4.									
…									

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2017 թվականի
սեպտեմբերի 7-ի N 1151 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ ՎԱՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է լսողական սարք և հաշմանդամի սայլակ ձեռք բերելու համար պետական հավաստագրերի հաշվառման գրանցամատյանի (այսուհետ՝ գրանցամատյան) վարման ընթացակարգը:

2. Գրանցամատյանի վարումը և պահպանումն իրականացնում է «Հանգրվան» ՊՈԱԿ-ը:

3. «Հանգրվան» ՊՈԱԿ-ը, հավաստագիրը տրամադրելիս, շահառուի և տրամադրված պարագայի մասին տվյալները գրանցում է գրանցամատյանում՝ համաձայն սույն կարգի N 5 ձևի:

4. Գրանցամատյանի էջերը համարակալվում և թելակարվում են:

5. Գրանցամատյանը կնքվում է «Հանգրվան» ՊՈԱԿ-ի ղեկավարի կնիքով:

6. Գրանցամատյանում անճշտության, սխալ գրառումների ուղղումը կատարվում է «Հանգրվան» ՊՈԱԿ-ի կողմից՝ սխալ կամ ոչ ճիշտ լրացված գրառումները վերցնելով փակագծերի մեջ և հաջորդ ազատ նոր տողում ավելացնելով ճիշտ գրառումները: Կատարված ոչ ճիշտ գրառման կողքին դրվում է ուղղումը կատարողի ստորագրությունը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը և պաշտոնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ձև N 5

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

NN ը/կ	Շահառուի անունը, ազգանունը, հայրանունը	Հավաստագիրը տրամադրողի անունը, ազգանունը, հայրանունը	Շահառուի անձնագրի (ծննդյան վկայականի) սերիան և համարը	Հավաստագրի հերթական համարը	Ավելացած արժեքով հավաստագրի գինը	Շահառուի փոխարեն հավաստագիրն ստացողի անունը, ազգանունը, հայրանունը	Հավաստագիրն ստացողի ստորագրությունը կամ փոստային կապի միջոցով կամ առցանց (էլեկտրոնային) եղանակով դիմումի (գրության) ամսաթիվը և համարը	Հավաստագրի տրամադրման ամսաթիվը	Հավաստագիրը տրամադրողի ստորագրությունը
	1	2	3	4	5	6	7	8	9
1.									
2.									
3.									
4.									
…									